



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԻՐԻ ԱՄԱՅՆՔ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 11
12 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2023 թվական

ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 20 անդամներ:

Բացակա էին՝ Նարեկ Անտոնյանը, Անահիտ Առաքելյանը, Անահիտ Հակոբյանը, Քրիստինե Մանուկյանը, Արթուր Մուրադյանը, Պետրոս Ստեփանյանը, Սոֆիկ Վարդանյանը:

Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝ Արտաշես Ղարիբյանը, Սևակ Գաբրիելյանը, Բաղդասար Թովմասյանը, Անդրանիկ Մեջլումյանը, Վարդան Հակոբյանը, Սիրանուշ Նիկողոսյանը, Արագ Հակոբյանը, Բաբկեն Բեգլարյանը:

Նիստը վարում էր համայնքի ղեկավար՝ Նորայր Սարգսյանը:

Նիստն արձանագրում էր աշխատակազմի քարտուղար՝ Հասմիկ Զաքարյանը:

1. Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆԱԻՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 12-Ի ԵՐԿՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՆՈՐԱՅՐ ՍԱՐԳՍՅԱՆ/

Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 14-րդ հոդվածի՝ Նաիրի համայնքի ավագանին որոշում է.

1. Հաստատել Նաիրի համայնքի ավագանու 2023 թվականի հոկտեմբերի 12-ի երկրորդ նստաշրջանի հերթական նիստի օրակարգը.

1) Նաիրի համայնքի 2024-2026 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագիրը հաստատելու մասին:

2) Նաիրի համայնքի 2023 թվականի բյուջեի երրորդ եռամսյակի եկամուտների և ծախսերի կատարման ընթացքի մասին:

3) Համայնքային սեփականություն հանդիսացող գույքը վարձակալության իրավունքով տրամադրելու վերաբերյալ համաձայնություն տալու և վարձավճարի չափ սահմանելու մասին:

4) Նաիրի համայնքի ավագանու 2023 թվականի սեպտեմբերի 12-ի N 178-Ա, N 179-Ա և N 180-Ա որոշումների 2-րդ կետերը ուժը կորցրած ճանաչելու մասին:

5) Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերը հրապարակային սակարկությամբ օտարելու և օտարման մեկնարկային գներ սահմանելու մասին:

6) Նաիրի համայնքի ավագանու 2023 թվականի սեպտեմբերի 12-ի N 189-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:

7) Համայնքային սեփականության հանդիսացող հողամասն ուղղակի վաճառքով օտարելու մասին:

8) Նաիրի համայնքի Զովունի գյուղի փողոցների անվանակոչության մասին:

9) Հողամասի նպատակային նշանակության փոփոխությանը համաձայնություն տալու մասին:

10) Հողամասի նպատակային նշանակության փոփոխությանը համաձայնություն տալու մասին:

11) Հողամասի նպատակային նշանակության փոփոխությանը համաձայնություն տալու մասին:

12) Հողամասի նպատակային նշանակության փոփոխությանը համաձայնություն տալու մասին:

13) Հողամասի նպատակային նշանակության փոփոխությանը համաձայնություն տալու մասին:

14) Հողամասի նպատակային նշանակության փոփոխությանը համաձայնություն տալու մասին:

15) Հողամասի նպատակային նշանակության փոփոխությանը համաձայնություն տալու մասին:

16) Հողամասի նպատակային նշանակության փոփոխությանը համաձայնություն տալու մասին:

17) Հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին:

18) Հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին:

19) Հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին:

Կողմ-19 Դեմ-0 Ձեռնպահ-0

Չի քվեարկել - 1
Աննման Բարայանը

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 217-Ա/

2. Լսեցին

ՆԱԻՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2024-2026 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ԾԱԽՍԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Ձեկ. ՆՈՐԱՅՐ ՍԱՐԳՍՅԱՆ/

Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18 հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի և <<Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին>> օրենքի 27.1-րդ հոդվածի՝ Նաիրի համայնքի ավագանին **որոշում է.**

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նաիրի համայնքի 2024-2026 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագիրը՝ համաձայն հավելվածների:

2. Ընդունել ի գիտություն, որ համայնքի կարճաժամկետ խնդիրները դիտարկվում են միջնաժամկետ (ՄԺԾԾ երեք տարվա կտրվածքով) կանխատեսումների համատեքստում, եկամուտները կանխատեսվում են համայնքային բյուջեին ամրագրված եկամուտներին առնչվող հարաբերությունները կարգավորող Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ,